ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.

ՎԵՆԵՏԻԿ. «Բազմավէպ» ի Խմբագրութեան։ Մի քանի անգամ թէ մասնաւոր նամակներով և թէ «Լումայ» ի պատասխաններում ծանուցել ենք Ձեզ, որ մենք «Բազմավէպը» անկանոն ենք ստանում. իսկ նորայաւելուած «Գեղունու» երեսը ամենևին չենք տեսել։ Անցեալ տարի Դուք գրել էիք, որ մենք այսուհետև կանոնաւոր կստանանք թէ մէկը և թէ միւսը։ Տարուայ վերջին հարկ ենք համարում վերստին յայտնել Ձեզ, որ այս տարի էլ «Բազմավէպ» տուած թերթը կարգին չստացանք։ № 6 չենք ստացել, իսկ աշխարհահռչակ յաւելուածը՝ ամենևին։ Խմբագրութիւնս այլ ևս ոչ մի յոյս չունենալով «Բազմավէպի» կանոնաւոր ստացման վերայ՝ որոշեց դադարեցնել Ձեզ «Լումայի» առաքումը առաջիկայ տարին։

ՕՐԷՆԲՈՒՐԳ. Պատրիկ. Ստացանք «Մօր յիշատակը», «Անհունի չէմքում» երկերը, և «Հաւատի ոյժ» թարգմանութիւնը։ Կկարդանք և կկարդադրենք հետզհետէ տպագրել։

Ֆ. «Մախլաս» ին. Ստացանք «Մի համեստ կարծիք» յօդուածը։ Կը տպենք։

ՆԻԿՈԼԱԵՎԻՉ (Մօրավիա) երեց Լուի Կուդէլկա.—№ 5 «Լումայ» ուղարկուած էր Ձեզ իւր ժամանակին, բայց յետ ստացանք փոստից «Unbekannt» մակագրով. այսօր նոյնը նորից ուղարկեցինք Ձեզ։

ԹԱՒՐԻԶ. Արուեան գրադարան.—Հաճեցէք պատասխանել մեր նամակներին. ինչո՞ւ էք լռութիւն պահպանում։

ԲԱԳՈՒ. Ա. Ե.—Երևի առաջիկայ յունուարին կտանք «Լումայի» հրատարակութեան առթիւ մի այլ յայտարարութիւն. այդ է պատճառը, որ մենք ուշացրինք Ձեր նամակի պատասխանը։

Ս. Պ. ԲՈՒՐԳ. Ա. Դ.—Ձեր յօդուածը ուշացած լինելով՝ մնաց հետևեալ համարին։

ԹԻՖԼԻՍ. Խչ.—Ձեր ուղարկած 6 յօդուածներից մէկը ուրիշի թարգմանութեամբ արդէն տպուած էր «Լումայում». միւս հինգը բոլորն էլ անյարմար լինելով՝ վերադարձրինք բերողին։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. Ե. Ե.—Շնորհակալ ենք Ձեր պարապատակամութեան համար։

Կ. ՊՕԼԻՍ. Ե. ա. ք. Մ.—Ստացանք Խ. Խ.-ի ձեռքով «Մշու Ս. Կարապետի համառօտ պատմութիւնը»։

Խմբագիր-Հրատարակիչ ԳԻՒՏ Ա. ՊԱՒԼ. ԱՂԱՆԵԱՆՑ